ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԼՈՒՐԵՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

ՄԱՐՍԵԼԻ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Սույն թվականի հոկտեմբերի 14-ին, կիրակի օրը, Մարսելի հայոց Մայր եկեղեցում տեղի է ունեցել հանդիսավոր ս. պատարագ Սրբոց Թարգմանչաց ազգային-եկեղեցական տոնի առթիվ: Օրվա պատարագիչն է եղել Մարսելի հայոց առաջնորդ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը: Այդ օրը Մարսելի հայոց Մայր եկեղեցին, որը օծված է եղել 1931 թվականի հոկտեմբերի 25-ին, բոլորել է իր օծման և անվանակոչության 53-րդ տարեդարձը:

Հավարտ պատարագի հոգեհանգստյան պաշտոն է կատարվել Մայր եկեղեցու հիմնադիրներ՝ հոգելույս Տ. Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյանի, Ասպետ Վահան Խորասանճյանի, ինչպես նաև իրենց նվիրատվություններով եկեղեցու կառուցմանը մասնակցած բոլոր հանգուցյալների հիշատակին: Այդ շարքում այս տարի բացառաբար հիշատակվել է նաև անգլիացի հայտնի քաղաքական գործիչ Ուիլյամ Գլադսթոնի անունը, որի ծոռը՝ Դեյվիդ Գլադսթոնը, որն այժմ Անգլիայի հյուպատոսն է Մարսելում, ներկա է եղել հոգեհանգստյան արարողությանը: Պատարագին և հոգեհանգստյան արարողությանը, բացի անգլիացի պաշտոնական հյուրերից, ներկա են եղել նաև Մարսելի նահանգապետ Պիեռ Սոմվեյը և Մարսելի քաղաքագլուխ Գաստոն Դեֆերի առաջին տեղակալ Ժան-Վիկտոր Կորդոնիեն:

Պատարագի սրբական երգեցողությունները կատարվել են Սահակ-Մեսրոպ երգչախմբի կողմից՝ ղեկավարությամբ խմբավար Խաչիկ Յոլմպյանի:

Հայ սուրբ թարգմանիչների հիշատակի ոգեկոչմանը նվիրված հավուր պատշաճի մի քարոզ է արտասանել պատարագիչ սրբազանը՝ պատմական ամփոփ տեղեկություններով վեր հանելով մեր հոգևոր մշակույթի առաջին մեծ երախտավորների մատուցած ծառայության նշանակությունը հայ գրականությանն ու դպրությանը: Նա նշել է, որ դարերի ընթացքում երջանկահիշատակ թարգմանիչները անաղարտ են պահել մեր հոգևոր արժեքները, անօրինակ փայլ են տվել դրանց և փոխանցել սերնդից սերունդ, որպես Եկեղեցի և որպես մշակույթ: Իր քարոզում Տ. Հակոբ եպիսկոպոսը գնահատանքով և երախտագիտությամբ է նշել Մայր Եկեղեցու հիմնադիրների ազգանվեր գործունեությունը, ինչպես նաև Գլադսթոնի գործադրած պատմական ջանքերը ի նպաստ հայ ժողովրդի արդար դատի:

Արարողության ավարտին, Մարսելի հայոց առաջնորդի գլխավորությամբ, հոգևորականների դասը, բարձրաստիճան հյուրերը և հավատացյալ ժողովուրդը, դուրս գալով տաճարից, ուղղվել է դեպի Մեծ եղեռնի զոհերի հիշատակին կառուցված հուշարձան՝ մի պահ խոնարհվելու բյուրավոր հայ նահատակների հիշատակի առաջ:

Այնուհետև Սահակ-Մեսրոպ Կենտրոնի մշակութային Արծրուն Ջրբաշյան սրահում տեղի է ունեցել պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում եկեղեցու վարչության ատենապետ պրն. Արշամ Պապայանի շնորհակալության խոսքից հետո, եկեղեցական վարչության անունից ֆրանսերեն լեզվով ելույթ է ունեցել դոկտ. Կարապետ Ղազինեճյանը՝ ծանրանալով Ուիլյամ Գլադսթոնի հայանպաստ գործունեության վրա: